

Ճառ հցին մեղ տեղւոյս Մարիամեան ուսումնարաւնի Հոգալարձութիւնը Կաղանդի օրին սուրբ պատարազը աւարտելուց յիսոյ՝ քաղաքիս Ավելիցիներումը ծանուցին ժողովրդոց, որ ուսումնարանի գահին մեջումը ժողոված են Հոգաբարձուք և վարժապետք աշակերտուհեաց նոր տարի շնորհաւորելու. ու խնդրում են նորա ցանկացողներին զնան նոյն ուսումնարանը և երկու ամսուայ ուուղ միջոցում աշակերտուհեաց արած յառաջադիմութիւնը վայելեն, նոցապատրաստած ձևուագործները տիսնեղ. ուրտեղ արանց և կանանց իրուն բազմութիւնն զիմեցին մեծաւ ուրախութեամբ, որոնց միջին և ես ներկոյ գտոյ նոյն կաղանդի շնորհաւորութեան. Նախ և յառաջ յարգելի Հոգաբարձութիւնը և Ուսուցիչքը շնորհաւորեցին նոր տարի, իրախոյս և միանգամայն իրաստ տալով աշակերտուհեաց աշխատասէր լինին. Իշեցին այստեղ նաև նորին Վեհափառութեան Հայրական ինսամբը և զմութիւնը առ ուսումնարան և առ ժողովարդութեաց:

Եպա յառաջ եկաւ բարեկրօն Եղիշէ Քահանյն Տէր Սահակեանց և ասաւ այս յետազոյ ուրախարար խօսքեր. Բարեբար Տեալք և Հանդիսականդ, պէտք է ճշմարտապէս խոստովանուենք, որ 1870 տարիի շրջանը վերջացաւ և մտանք ներկայ 1871 տարում, որ է մեղ Դորեցոնց համար մեծ ուրախութիւն. Երդարեւ նոր կեանք և նոր յառաջադիմութիւն ազգային սեղանի վերայ. բայց առաւել մեծ ուրախութիւն և Աստուծոյ ողորմութիւն կինի երրոր ձեր աղջիկները իրանք իրանց կարողանան ապագայում թոյթովախօսեն Հայերէն լեզուով, և ձեղ պատուեն ճառով. սակայն այժմ՝ կամնում են ազգային երգով ձեղ և ինձ ուրախացնել գեռափթիթ աշակերտուհիք, որ կարողացայ նոցա այս փոքր միջոցում սովորցնել. Խօկոյն նորա էլ Հնչեցին զգալի եղանակաւ Հայաստան երկիր զբախուավայր, և ուրիշ մի քանի ընտիր երգեր, որոնց ասութեան վերայ ամենքը զմայիցան և ուրախացան. Եշակերտուհիները փաքր նոր ձեփ Հայերէն տեսոր աւարտել էին մի քանի թեթև յօդուածներով հանդերձ. յաջող կերպով կարդում էին ու Արացերէն թարգմանում. նոցա վայելչաղը ու

թիւններն նոյնպէս մաքուր ու յատակէր. Ուսւերէն զրել ու կարդալն էլ բաւականին յաջողակ: Իսկ ձեռագործերից ունեմն բաւականաշափ պատրաստած և անպատրաստ վզի փոքր կապեր (շարֆ)՝ զրասեղանի սփոռցներ՝ շամատանների տակեր են. այսպիսիք գործել են սփրուն ու մաքուր:

Երդ այս սուղ միջոցում արած յառաջադիմութիւնը համեմատելով ժամանակի հետ և լող հակառակ ժամանակը—առաջադիմութիւնը շատ մեծ էր, որի համար Հոգաբարձուուաց, վարժապետաց և վարժուհեաց՝ խնդրում եմ պատուական Արարատ ամսագրոյ Խմբագրութենէդ հրատարակել մեզանից հրապարակաւ շնորհակալութիւն, բարեմանը լեզով առ բարձրեալն Աստուած՝ շնորհիլ նոցա կարողութիւն և զօրութիւն ուսումնարանը լուսական լուսական վապահովելոց և ի Գօրի նոր լոյս տալու: Աերջը աշակերտուհեաց զանազան մրգեղին բաժանելով ի կողմանէ Հոգաբարձուաց՝ ներկայ գտնուողները՝ զուրս եղան ամենքը շնորհակալութեամբ:

Դաշտ Յոհաննէս Աստուածանուց.

150 Յանվարի 1870 թ.

ի Գ. Գուէ

Գ Ի Ւ Մ Ը Ւ

(ԹԱ. Աս-էն Հայուալ.)

Կան ՅՈՒ չափ քահանայք Հայոց. սոքա կենցաղաբարվում են ժողովրդների տուքքերով, ստամնալով եկամուտ պատկերից, մկրտութիւններից, ննջեցեալների թաղումներից, ծննդեան և Զատկի տնօրինէքներից և մեռելոց յիշատակութեան օրերում՝ զերեղմանօրինէքից. նրանցից ոմանք էլ ուսուցչութեամբ են պարապում:

Կան ԱԿ չափ ծխական ուսումնարաններ *

(*) Մարդկային ծիրերը նրան շնորհուած անհնակարեւ մասանց մէջ զանազանարար նկատմում են թէեւ իրաքանչիւր անհատների վերայ, բայց առաւ երապէս նրանց մէջ զավթին է միտքը — հասկա-

Աղքատանոց շարունակվում է 1861 թուից քսաղաքի վկացուած և զննուած աղքատները իւրաքանչիւր ամսագլուխներին ստանում են ամսական նուերբներ Հոգարարձութիւնից, և սորտ կա-

ցողութիւնը, որ ընդարձակում է իրայ սահմանի մէջ ուսման օգնականութեամբ. նորա ամենահարկաւոր թիւնը եւ շահաւէտութիւնը մարդկութեան պարագաներին, լու Է հասկացուել արդի ժամանակում. ուստի եւ նախամեծար է համարվում ամենայն գորեղ առարկաներիցը: Ասացի զովելի կլինի հասկացողութիւնը բնական մորի ուսման շնորհիւը. որովհետեւ նա օր ըստ օրէ կընդարձակուի, եւ աւելի զօրաւոր եւ առատ կլինի իրայ լրութեան սահմանում. եւ յայնժամ երկուսն իրեն մի համահաւասար լծակից միմեանց, պատում են բանականօրէն, դործում են կատարելորէն, որով եւ հասարակութեան մէջ բնափր օրինակներ են ընծայում ի լոյս, որոնք եւ նայում են ճշմարտութեան ծայրին. ուստեմն է մարդը առաջնորդող դէպի այս պայմանները, նա նկարագրում է իւր յատկութիւնները եւ շահերը հասարակութեան աչքի առաջ. նա նախագդուշացնում է այն յիշին ռամպին երկնչել այն վնասաներից, որոնք ինքն ինքնակամ կամ ակամայ ենթարկվելով, էլ այնուհետեւ չի կամենում իրայ կրածը, իւր որդուցը եւ ազգակիցներին: Շատերն զովում են թէի բնական մարիչէքը, բայց զործ են ածում նրանց տեսած առարկաներիցը զաս առած միջոցների եւ ձեւերի արմորութիւններովը, որ եւ երբեմն հակառակաբարպատանում է, որ միտքը իրեն մի ստրուկ, կամքի յանիբաւացի հրամաններն է կատարում. եւ այսպիսիքը հարկու յառաջացած կլինին ուսման պակասութիւնից. այս վիճերը ես ակներեւ տեսնում եմ այդ ծխական դպրոցների շեմքերի առաջները, այդ ուսուցիչները . . . այդ ճանապարհը յարմարաւոր են մտածել թէի իւրեանց կենցագակարութեան դիրութեան համար, սակայն չեն հասկանում ուսուցութեան վիճ սուրբ եւ ամենածանր պաշտօնը, եւ նորա իսկութիւնը. այդպիսի դպրոցներով գեռ մենք օրէ ցօր վայ ենք դիպում մեր զիններին, նրանցում սովորում են աշակերտները հասարակ ընթերցանութիւն եւ մասնաւորապէս քերականութեան առաջին մասից, եւ այն շատ ցաւալի եղա-

րողութիւնը զումարվում է հասարակութեան տուբերից և այլ պատահական եկամուտներից. այս Աղքատանոցը երբեմնապէս թէկ փակուած է, բայց սակաւ միջոցում վերանորոգված է կրկին*):

Օստարականներից եկաւորների տեղաւորութեան և նրանց կամ տեղակական բնակչաց առևտրականութեանց համար կան 20ի չափ սանդոկներ (քարվանսարէք) և երեք հցակապ բաղանիք, ուր կանայքը վճարում են $7\frac{1}{2}$ կոպէկ, իսկ արք 20 կոպէկ արծաթ:

Առևտրականութիւնը միջակ քայլ ունի՝ առևտրականների մէծ մասը հանապազ տրանչում են, որ ապառիկները չեն կարում հեշտութեամբ ձեռք բերել:

Եռհետական դասերը յաջողակ են իրանց առևտրականութեան ներբին պայմաններում մը. բայց անցաջող իւրեանց ձեռագործների մջ, և աչքով են անում անցած դարերքն և տարիներին:

Այս տեղացիք սովորութիւն ունին ուխտագնացութեան որպէս մերձակայ զիւղօրայքում

նակաւ, սա միեւնոյն ուսումն է, ինչ օր քանի տարով յառաջ շարունակվում էր. այս ուսուցիչների տղիտութեան եւ բանութեան տակ ճնշվում են աշակերտների մարերը, ի զուր են կորչում նրանց մանկական սուր բմբունողական ժամերը. խեղճ մանուկներ եւ մանկութիւններ . . . ափսոսակի քանիքարներ . . . անմեղ կորուսաներ . . . այս ուսուցիչներին ես վատահանում եմ կոչել ցեց մարգկութեան եւ ժանդ դաղափարների:

(*) Այս աղքատանոցի փակուած ժամանակին տեսնում ենք, որ Ալքասանդրապօլս փողոցները եւ կրպակները աղքատներով լի են. եւ մարզը անցկենակիս, ճանճանում է նրանց ուզողութիւններից. այնպէս եւ իւրաքանչիւր օրը վեց—եօթն ափսէ կամ թաշկինակ երկու անմանց միջորդութեամբ ման են ածգում հասարակութեան կրպակներում օրննէնքով մաղթանրով եւ ստիպմամբ. եւ ով ժիր է, նա շատ է հաւաքում. քանից անգամ էլ պատահած է, որ այսպիսի ողորմութեան նուերբներով շատ անջննը այլոց անուամբ շրջելով, իւրեանց համար են հաւաքի, եւ ուրախութիւն արել զիննեաների մէջ:

եղած աւետարաններից, ուր և շատիցս պատահում են զանազան անկարգութիւններ և կոխներ, ոյնպէս և հեռի տեղանքում, չնոյելով՝ որ ոյն ուժագնացութեամբը շռայլ և անպէտք ծախսեր աներով կորուսանում են իւրեանցուարեկան վաստակի մեծ մասը. որոնք կարող են իւրեանց ապրուստի պէտքերին թեթեւութիւն տալ (խօսքս ձեռնհասների վերայ չէ), տեսնում ենք շատ մարդիկ, որ նշն ուժագնացութեամբը պատիւ որսալիս՝ իրանց իսկական պատիւներն են կորուսեր. և ապա ի՞նչպիսպ տանջանքներով չեն կարում օրական հօնցը ձեռք բերել, գեռսպասելով այլոց օգնութիւններին. ահա հեռատեսութիւն . . . :

Թատրոնական խաղ սկսուեցաւ այս տեղ 1865 թուին. բայց ժողովրդի մեծ մասի հասկացողութեան շնորհւը չկարողացաւ շարունակութիւն ունենալ. թէև գերասաններն ես աշխատում են առանց ակնկալութեան վարձու *):

Ընթերցարանն բացուեցաւ 1866 թուին, և սակաւամիջոցում խափանեցաւ. իսկ ներկայ թը վումն կրկին նորոգվեցաւ, և յուսալի է՝ թէ յարաւութիւն ունենայ:

Այս տեղացիք օրինակվելով նախնական սովորութ կարս քաղաքի՝ զիտեն իւնիցը Զատկի օրը մատաղ անել, և առհասարակ բաժանել իւրաքանչիւր տներում, որ նրանով պասերը բաց անեն. Բայց ինպէս հասկացվում է՝ սա կատար-

(*) Ես եւս իրբեւ արդ թատրոնի դերասանների շարքիցը գոլով, մէկ օր մի վաճառական պարոնի մօտիցը անցնելիս, հարցուեցաւ նրանից „Աղքէր օր կերթաք կը ծեր թիաթիրը, օդորդ ինչ կէնէք կը, : Պատասխանեցի „Կարող էք մէկ օր շնորհ բերել այն տեղ եւ տեսնել աչքերովդ թէ ինչ կէննենք կը,, ասաց ։ զամի ես միտքս ծոել եմ օր, մէկ օրըն պիտի դամ թիաթիրը. ըմմը էս միտք կէննեմ կը, թէ հինգ շահի տամ, ինձի ամօթ է, թէ տասաը շահի տամ, փարան ափան է, է նըլը մնայ աշենք. (Նկատեցի, որ մտքին ուներ ինձ բազարի միջին ներկայացնել տալ մի գործողութիւն). ասացի ։ Թող դերասանները չարչարուին առանց շահիի, տեսնենք նրանց վերջն ինչ կլինի. դուք էլ ափասացէք տասոք շահուն, տեսնենք մեր վերջն ինչ կլինի,, թողի անցայ,

վում է ամենայն տարի իրրեւ նախնական հայրենական ծէս մի, որց վերայ եթէ նուրբ հայեացք գարձնեն՝ կարելի է մի այլօրինակ աւելի օդտաւէտ կերպիւ կատարել:

Սովորութիւն ունին օրինորդները Քարեկենդանի Առաջաւորաց պահոցը հինգ օրը ամբողջ ծոմ պահէլ, կամ օրը միանգամ ուտել. և վերջին ուրամբ երեկոյին մի աղի հաց են ուտում: . . .

Գործածական են այս տեղ առհասարակ Տաճկերէն երգերը՝ իսկ այժմ նորերի մէջ սովորական են Հայերէն երգերը և. Պօլոսյ և Տփիխուսու: Աշուղները սրճարաններում (զահիլէքում) միշտ Տաճկերէն են երգում, այնպէս և հարսանիքներում. և ժողովուրդը մեծ ըղձով լսելիք է մատուցանում նրանց:

Քանի տարով յառաջ կաղմուած քանի ընկերութիւններ առեւտրականութեան, բայց բոլորըն քանզուեցան. որովհետեւ զրամազլուխը անհաւատաբիմ և անդործավար անձանց ձեռքումը անպտուղ և գրեթէ զիսակորոյս դուրս եկան:

Տղայի և աղջկայ նշանապրութեան ժամանակ բաւականին անտեղի ծախսեր են անում, ։ ։ ։ արսընտեսու, և ափեսատեսու, անունով՝ միայն՝ այս կարգաւ վարպում են մեծ մասամբ ստորին կամ միջակ կարգի անձինքը՝ շնոյելով որ ի զուր մեծամեծ վնասներ են կրում: Հարսանիքը սկսում են շրաբն երեկոյիցը վերջանում է եր՛ուշարթի երեկոյին՝ շատ տեղանքում պատահում է, որ երեկշարթի առաւտուն կրկին ժողովում են նորահարսները և ուրախութիւն անում մինչև երեկոյ. որ ասվում է ։ ։ ։ ։ ։ ։ ։ ։ կպատահին ումանկ անձինք, որ շատ թեթև եղանակաւ են կատարում այս հանդէսները. իսկ լսողները նրանց հաւանութեան տեղիք կտան. բայց չեն օրինակվում:

Ինչպէս յայտնի է, Աղէքսանդրապոլը համարվում է 40 տարուայ քաղաք, և իւր այս փոքրիկ հասակումը բաւականին յառաջաղիմութիւն ստացած է թէ արտաքին զրութեամբ և թէ բնակչաց մուռուական զարգացմամբ. և յիրաւի նշանակութիւն ունի համեմատութեամբ իւր շրջակայ քաղաքների հետ, նորա օդի և ջրի պարզութեան և մաքրութեան շնորհիւ տղայոց մաքերը շատ

պարզ են և ըմբռնողութիւնները սուր. միայն՝ բնութեան այս բարելի անգստանը (ինչպէս վերել ծանօթութեան մէջ հասկացուցի) անհնամ և անչիրկ մնալու պատճառաւ կըրանան կմնան անպոտը կամ ընդհակառակին փշեր կրուցնեն Բայց ինչպէս նկատում եմ հասարակութիւնը այս վեհը օրէ ցօր լաւ նկատում է, նա կաշխատի արձակ ճանապարհ պատրաստել իւր և սերընդոց առաջին, և վերջապէս փառաւորել իւր անունը մարդկութեան պայմաններումը:

Սրանից մի ամիս յառաջ մի օգտաւէտ գործի ձեռնարկութիւն արաւ Աղեքսանդրապոլի հասարակութիւնը, նա շտապեցաւ բերել տալ Պետերբուրգից հիւսիսային Գերմանիայում Զուցարիայումը ուսուցութեան պատրաստվելու ուղարկուած մի ուսուցիչ (Պ. Ս. Պէկ - Նազարեանց Տըփիսիսեցի), որց համար առաջարկած էին Պետերբուրգի Արզյ ուսանողները: Մեր հասարակութիւնը իւր խորին շնորհակալութիւնը յայտնելով նոյն Ուսանողներին, ուղարկեց ուսումնարանապատկան փողեց ճանապարհի՝ զրբերի և այլ գործիքների ծախս. և սպասում է նոյն ուսուցչի շնորհաբեր գալստեանը: Արդարեւ այս բաղդը Աղեքսանդրապոլւ համար մի երկնային շնորհ էր:

ՅԱՀԱՆՆԵՆ ԽԾԸՆՅԵԱՆ:

ՅԱՀԱՆՆԵՆ ԽԾԸՆՅԵԱՆ:

ԲԻՒԶԱՆԴԵԱՆ ՍՈՒՐՃԱՆԴԱԿԻՔ

ԿՏԱԿ ՅԱԿՈԲ ԱԼԻՔՎԵՐԵԱՆԻ

Ճանդուցեալ արքունի Ճարտարապետ Սէրվերեան Յոլչաննես աղայի եղբայր մէծապատիւ Յակոբ աղան, 20000 զբուշ կտակ ըրեր է, Խւսկիւտարի Ենիմահալէի երիսեռ վարժարանաց համար, Սէթեան գերապատիւ Յովչաննես եպիսկոպոսի ձեռօք, իւր և աղնուափայլ ամուսնոյն մահուանէն յետոյ տրուելու պայմանաւ:

Թաղին մէծապատիւ Խորհուրդը մէծաւ գոհութեամբ արձանարելով այս կտակը թաղային տոմարին մէջ փութացաւ բոլոր թաղեցւոց կողմանէ շնորհակալեաց Ուղերձ մը մատուցանել մէծապատիւ կտակաւարին:

Շատերը զիտեն թէ Սէրվիլերեան ընտանիքը ժամանակաւ որչափ հոդ տարած և նուէրներ տուած է ձեմարանին համար, որուն արդիւնքը կվայելէ այսօր ազգը՝ իւր մէջ գտնուած նշանաւոր անձանց շատը նոյն Հաստատութեան աշակերտներն ըլլարվ։ Հետեւարար աւելորդ կհամարիմք Սէրվիլերեան Յակոբ աղայի այս ուսումնասիրական գործին վըրայ գովեաններ խօսիլ, սակայն՝ պարտ է մեզ որ այս առթիւ ձեռնհաս ազգայնոց հրաւէր կարդամք, Սէրվիլերեանի օրինակին հետեւելու համար:

Փառաջ Էլլ 650 Դէկտ. 26

ՊԱՏԱՐԱԳ ՄԱՏՈՒՑԱՆԵԼՈՒ

ՆՈՐ ԶԵՒՏԵՐ

Տարի մանցաւ, բայց ուր հռոմէական ազգայնոց մէջ Հասուննեան և Հակահասուննեան անուններով բացուած երկաստակութեան մէծ վիճն տակաւին չգոցուեցաւ: Իրաւախոհութեան և հաշտութեան համար եղած յորդորները ապարդիւն կմնան, և ատելութիւնն ու հեռը օր յօրէ կաւելնայ նորանոր գէպքեր վրայ գալով։ Ահաւասիկ խիստ ախուր գէպք մալ այս օրերս պատահած է մայրաքաղաքիս մէջ, որ հետեւեալ կերպիւ կըպատմուի և զոր կհրատարակենք ցաւօք սրտիւ:

Հինգշարթի օրը՝ գեկտ. 31 Հասուննեան կողմէն 500 ի չափ անձինք Պալամից եկեղեցին կժողվուին, և կուզեն զրօք փակելովք պատարագ մատուցանել տալ Գեր. Հասուննեանի Հակահասուննեանիք լսելով՝ կուզան եկեղեցւոյն դուռը ձեռք կառնեն և բաղիսել կսկսին: Ներար գանուողները չեն բանար: Ասոր վրայ, Հակահասուննեանը պատրիարքարանի կողմը գտնուած դուռը երկամթներով կիորեն և կյաջողին տեղէն հանելով բանալաւոնց մէջն ներս մընողները բիլերով ծեծուելով գուրս կվունտուին: Հետեւարար՝ կսկսին եկեղեցւոյն պատուհանները քարեռնել: Վերջապէս՝ կարեւ կմեծանայ: Ոստիկանութեան պաշտօնեաց վսեմ՝ Հիւսնի փաշան կհամնի և դուած մարդիկը բուներով Պոլիս կղրէ:

Միանգամայն կպատմուի թէ՝ Հակահասուննեանք եկեղեցւոյն մէրձակայ տան մը մէջ Պատ-